ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԱՄՍԱ/8ԶԿ
«25» 02 2021թ.

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին
ք. Երևան, Աբովյան փ./23
էլ. հասցեն՝ abama.trade@mail.ru
ՀՎՀՀ 02825811

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 28.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/29-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 30.09.2020թ. կնքված N1 Փոփոխության (այսուհետ՝ Փոփոխություն) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել նեքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը նշված քանակով՝

| Ապրանքի անվանում | Չ/մ | Քանակ | Մատակարարման ժամանակացույց՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020.թ | Չմատակարարված քանակ |
|---|---|---|---|---|
| Ազիթրոմիցին (ազիթրոմիցին դիհիդրատ) azithromycin (azithromycin dihydrate) | հատ | 1500 | 1500 | 1500 |

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Փոփոխությունը:

Տեղեկացնում ենք, որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել *161,153 (հարյուր վաթսունմեկ հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ*՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար *749,550 (յոթ հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ*, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և *7,495,500 (յոթ միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ* դրամ որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Ն. ՅՈԼՉՅԱՆ